ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 233-Ա

Արթիկ համայնք 22 դեկտեմբերի 2022 թվական

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 174-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող, թվով 7 /յոթ/ մարդատար մեքենաները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ

| **Կողմ (18)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |

Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի դեկտեմբերի 22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 234-Ն

Արթիկ համայնք 22 դեկտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.
Եկամտային մաս
1) «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» 1261 տողում գրված «253930800 երկու հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր երեսուն հազար ութ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «254569800 երկու հարյուր հիսունչորս միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր» թվով և բառերով: /639000/վեց հարյուր երեսունինը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Փանիկ բնակավայրի 2-րդ փողոցի թիվ 51 Մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի համար սուբվենցիոն գումարի տարբերություն/:
2) «Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 1255 տողում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «582400 հինգ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր» թվով և բառերով: /Նախադպրոցական կրթության ոլորտի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դաստիարակների վերապատրաստման դասընթացի մասնակցության գումարի փոխհատուցում/:
2. Ծախսային մաս
1) Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ բաժնի 08.2.3 դասակարգմամբ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (5113) հոդվածում գրված «107538400 մեկ հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր» թիվը և բառերը փոխարինել «108117400 մեկ հարյուր ութ միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր» թվով և բառերով: /639000(վեց հարյուր երեսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Փանիկ բնակավայրի 2-րդ փողոցի թիվ 51 Մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագրի պետական բյուջեի հատկացում 45%-ի տարբերություն/:
2) Նախադպրոցական կրթություն բաժնի 09.1.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «356300200 երեք հարյուր հիսունվեց միլիոն երեք հարյուր հազար երկու հարյուր» թիվը և բառերը փոխարինել «359340200 երեք հարյուր հիսունինը միլիոն երեք հարյուր քառասուն հազար երկու հարյուր» թվով և բառերով: Այդ թվում «Գեղանիստի նախադպրոցական

ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «14312000 տասնչորս միլիոն երեք հարյուր տասներկու հազար» թիվը և բառերը փոխարինել «16052000 տասնվեց միլիոն հիսուներկու հազար» թվով և բառերով, «Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «9337000 ինը միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար» թիվը և բառերը փոխարինել «10342000 տաս միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար» թվով և բառերով, «Անուշավանի Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «23271500 քսաներեք միլիոն երկու հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «23566500 քսաներեք միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր» թվով և բառերով:

3) Արտադպրոցական դաստիարակություն բաժնի 09.5.1 դասակարգմամբ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «215796100 երկու հարյուր տասնհինգ միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար մեկ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «216810100 երկու հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր տաս հազար մեկ հարյուր» թվով և բառերով:Այդ թվում «Հառիճի արվեստի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն տողի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» (4511) հոդվածում գրված «6560000 վեց միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար» թիվը և բառերը փոխարինել «7574000 յոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար» թվով և բառերով:

4) Փողոցների լուսավորում բաժնի 06.4.1 դասակարգմամբ

ա/«Էներգետիկ ծառայություններ» (4212) հոդվածում գրված «40920000 քառասուն միլիոն ինը հարյուր քսան հազար» թիվը և բառերը փոխարինել «42920000 քառասուներկու միլիոն ինը հարյուր քսան հազար» թվով և բառերով:

բ/ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (4251) հոդվածում գրված «11173700 տասնմեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «12133700 տասներկու միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր» թվով և բառերով: /960000 (ինը հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Արթիկ համայնքի կարիքների համար արտաքին լուսավորության ցանցի 1 տարվա ընթացքում լուսատուների շահագործման և սպասարկման ծառայություն» պայմանագրի գումարի 10%-ի ավելացում/:

5) Աղբահանում բաժնի 05.1.1 դասակարգմամբ

ա/ «Այլ կապիտալ դրամաշնորհներ» (4657) հոդվածում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «15894500 տասնհինգ միլիոն ութ հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր» թվով և բառերով: /Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի և Արթիկի համայնքապետարանի միջև կնքված համաձայնագրի հիման վրա Կոմունալ ծառայությունների բարելավման ծրագրի համայնքային ներդրման գումար/:

բ/ «Կոմունալ ծառայություններ» (4213) հոդվածում գրված «87861400 ութսունյոթ միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր» թիվը և բառերը փոխարինել «88961400 ութսունութ միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր» թվով և բառերով: /1100000/մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ձյան մաքրման աշխատանքների համար պայմանագրի գումարի 10%-ի չափով ավելացում/:

6) Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 06.6.1 դասակարգմամբ «Շենքերի և շինությունների կառուցում» (5112) հոդվածում գրված «43990800 քառասուներեք միլիոն ինը հարյուր իննսուն հազար ութ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «44290800 քառասունչորս միլիոն երկու հարյուր իննսուն հազար ութ հարյուր» թվով և բառերով: /300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Արթիկ քաղաքի թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն սուբվենցիոն ծրագիր 100%/:

7) Այլ մշակութային կազմակերպություններ բաժնի 08.2.4 դասակարգմամբ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (4239) հոդվածում գրված «15803600 տասնհինգ միլիոն ութ հարյուր երեք հազար վեց հարյուր» թիվը և բառերը փոխարինել «17803600 տասնյոթ միլիոն ութ հարյուր երեք հազար վեց հարյուր» թվով և բառերով:

8) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի 11.1.2 «Պահուստային միջոցներ» (4891) հոդվածում գրված «52473860 հիսուներկու միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր վաթսուն» թիվը և բառերը փոխարինել «26747760 քսանվեց միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր վաթսուն» թվով և բառերով:

9) Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից «300000 երեք հարյուր հազար» Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել համայնքի ֆոնդային բյուջե:

Ավագանու անդամներ

| **Կողմ (18)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Պետրոսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Վարագյան | | |
| Ասատրյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի դեկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 235-Ն

Արթիկ համայնք 22 դեկտեմբերի 2022թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեն համաձայն հավելվածի.

1) եկամուտների գծով՝ 2,270,268.5 հազար դրամ
2) ծախսերի գծով՝ 2,270,268.5 հազար դրամ
3) հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 10% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ մասնագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3. Սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 3%-ը:

Ավագանու անդամներ

| **Կողմ (18)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Պետրոսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Վարագյան | | |
| Ասատրյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2022 թվականի դեկտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

# ՈՒ Ղ Ե Ր Ձ

# ՄԱՍ I

## Արթիկ համայնքի ղեկավարի զեկույցը 2023 թվականի Արթիկ համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Արթիկ համայնքի զարգացման 2022-2026 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Արթիկ համայնքի 2023թ թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2022 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Արթիկ համայնքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, ինչպես նաև ընդունելով այն, որ 2023 թվականը հնգամյա ծրագրի երկրորդ տարին է, Արթիկ համայնքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Արթիկ համայնքի 2022 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է կայուն ու համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Արթիկ համայնքի կայուն զարգացման ապահովումը՝ կառավարման արդյունավետության բարձրացման, համայնքապետարանի գործունեության

թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու միջոցով:

2. Մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
3. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով:
4. Համայնքի կառավարման ներառականության ապահովումը:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակումն ու ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
8. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդումը:
9. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացում և գործունեության թափանցիկության ապահովումը:
10. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
11. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Արթիկ համայնքի զբոսաշրջային ինքնության ստեղծումը:
12. Շրջակա միջավայրի պահպանումն ու վերականգնումը:
13. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
14. Արթիկ համայնքի կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված

միջոցառումների իրականացումը:

15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
16. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
17. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը:
18. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
19. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
20. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

21. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

## ՄԱՍ II

## Բացատրագիր-Հիմնավորում

## Արթիկ համայնքի 2023 թվականի

## բյուջեի

## նախագծի

Արթիկ համայնքի 2023 թ. թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

*եկամուտների գծով՝ **2,270,268.5** հազ. դրամ,*

*ծախսերի գծով՝ **2,270,268.5** հազ. դրամ,*

*դեֆիցիտը՝ 0.0 հազ. դրամ:*

### 1. Եկամուտների կանխատեսում.

Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2,270,268.5 հազ. դրամի չափով՝ Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված 2,026,818.8հազ. դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2021 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներին 209,897.4 հազ. դրամով կամ 10.2 %-ով: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 552,898.8 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսվածից 37,109.8 հազ. դրամով ավելի, իսկ 2021թվականի սեփական եկամուտների

փաստացի կատարողականից 116,978.4 հազ. դրամով կամ շուրջ 26.8 %-ով ավելի:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

**Հարկեր և տուրքեր**.

Հարկային եկամուտները ծրագրվել են 344,057.0 հազ. դրամի չափով կամ 2022 թվականի համար հաստատված ցուցանիշից 28,265.0 հազ. դրամով կամ 9.0%-ով ավելի: 2023 թվականին նախատեսված հարկային եկամուտները ավել են 2021 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 68,803.5 հազ. դրամով կամ 25.0%-ով, որից.

- Գույքային հարկեր անշարժ գույքից նախագծով նախատեսվել է 105,038.0 հազ. դրամ կամ 2022 թվականի համար հաստատված ցուցանիշից 18,856.0 հազ. դրամով ավելի, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշից 31,694.9 հազ. դրամով կամ շուրջ 43.2 %–ով ավելի,
- Գույքային հարկեր այլ գույքից /գույքահարկ փոխադրամիջոցների համար/ ծրագրվել է 239,019.0 հազ. դրամ՝ 2022 թվականին ծրագրված ցուցանիշից 11,409.0 հազ. դրամով ավելի: 2023 թվականին նախատեսված փոխադրամիջոցների գույքահարկը գերազանցում է 2021 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշը 37,108.6 հազ. դրամով կամ 18.4%-ով:

Տեղական տուրքերի գծով 2023 թվականին ծրագրվել են 17,007.3 հազ. դրամի մուտքեր 2022 թվականին նախատեսված 22,297.4 հազ. դրամի դիմաց կամ 5,290.1 հազ. դրամով պակաս, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 1,540.3 հազ. դրամով կամ շուրջ 10.0%–ով:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2023 թվականի համար նախագծով ծրագրվել են 7,000.0 հազ. դրամ, որը հավասար է 2022 թվականի հաստատված ցուցանիշին, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է

3,192.0 հազ. դրամով կամ շուրջ 31.3%-ով:

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 3,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 4,000.0 հազ. դրամ:

**Պաշտոնական դրամաշնորհներ.**

Հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 1,713,371.7 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2022 թվականին ծրագրված ցուցանիշից 206,017.0 հազ. դրամով ավելի: 2023 թվականին նախատեսված պաշտոնական դրամաշնորհների գումարները գերազանցում են 2021 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշը 101,126.2 հազ. դրամով կամ 6.3%-ով: Ընդ որում.

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 1,713,371.7 հազ. դրամ՝ 2022 թվականին ծրագրված ցուցանիշից 389,433.8 հազ. դրամով ավելի, իսկ 2021 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշից 383,598.9 հազ. դրամով կամ 28.8%-ով:

**Այլ եկամուտներ.**

Այլ եկամուտները 2023 թվականի նախագծով ծրագրվել են 190,020.5 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 174,374.7 հազ. դրամի դիմաց կամ 9.0%- ով պակաս, ինչը նաև ավելացում է 2021 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ 29.1%- ով, որից.

- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 27,091.8 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված 33,632.3 հազ. դրամի, որից 28,053.5 հաշվարկված մեծություն, դիմաց կամ 961.7 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումները:
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետական

սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 7,471.6 հազ. դրամ՝ 2022 թվականին նախատեսված 10,847.0, հազ. դրամի, որից 8220.6 հազ. դրամը՝ հաշվարկված մեծություն, դիմաց կամ 749.0 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումները:

- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն՛ հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 11,906.1 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսված 5,978.8 հազ. դրամի դիմաց կամ 5,927.3հազ. դրամով ավելի, իսկ 2021 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից ավել է 81.0%- ով:
- տեղական վճարների գծով ծրագրվել է 137,965.0 հազ. դրամ՝ 2022 թվականից 117,441.5 հազ. դրամի համեմատ, ինչն ավելի է նաև 2021 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 48347.8 հազ. դրամով կամ 53.9%-ով, որից համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար տեղական վճարը ծրագրվել է 36,000.0 հազ. դրամ, ինչը նույնն է նաև 2022 թվականի համար, իսկ 2021 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից ավել է17.1%-ով: Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար ծրագրվել է 100.0 հազ. դրամ : Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար ծրագրվել է 74,820.0 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսված 58,660.0 հազ. դրամի դիմաց կամ 16,160.0 հազ. դրամով ավելի: Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար ծրագրվել է 23,095.0 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսված 19,015.6 հազ. դրամի դիմաց կամ 4,079.4 հազ. դրամով ավելի: Համայնքի տարածքում շինարարության կամ շինության

արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապվածտեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմացփոխհատուցման վճար ծրագրավորրվել է 260.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 60.0 հազ. դրամի, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ 60.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 40.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 30.0 հազ.դրամ, ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ 3,000.0 հազ, դրամ, այլ տեղական վճարներ՝ 500.0 հազ. դրամ

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 200.0 հազ. դրամ:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 200.0 հազ. դրամ, 2022 թվականի նախատեսված 400.0 հազ. դրամի դիմաց կամ 200.0հազ. դրամով պակաս, իսկ 2021 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից պակաս է 79.5%-ով:

## 2. Ծախսերի կանխատեսում.

Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 2,270,268.5 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 100%-ը բաժին

է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 3,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2022 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 66,108.1 հազ. դրամով: Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 32.4%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 3.2%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 9.1%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժնի ծախսերին՝ 2.8%, ոռոգման բնագավառի ծախսերին՝ 1.5%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ բաժնի ծախսերին՝ 4.4%, հանգիստ, մշակույթ և կրոն բաժնի ծախսերին՝ 5.7%

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 369,226.1 հազ. դրամի չափով, (վարչական եկամուտների 16.3%–ը):

<u>**Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր**</u> ծրագրով նախատեսվել են մուտքեր 3,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,000.0 հազ. դրամի չափով,
բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 2,000.0 հազ. դրամի չափով

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2022 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է Արթիկ համայնքի պաշտոնական կայքում: Միաժամանակ Արթիկ համայնքի պաշտոնական կայքում հրապարակվել է Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2022 թվականի դեկտեմբերի 8-ին Արթիկի համայնքապետարանում կազմակերպվել է Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց

լումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ:

Այսպիսով,  Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. եկամուտների գծով՝ **2,270,268.5** հազ. դրամ,
2. ծախսերի գծով՝ **2,270,268.5** հազ. դրամ,
3. դեֆիցիտը՝ **0.0** հազ. դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի դեկտեմբերի 22

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 236-Ա

Արթիկ համայնք 22 դեկտեմբերի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 1-ին բաժնի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով,, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022թվականի հոկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> թիվ 174-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) Որոշմամբ հաստատված հանձնաժողովի անդամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ սոցիալական աշխատող Էդգար Ալեքսանի Բզնունու փոխարեն հանձնաժողովում որպես անդամ ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ սոցիալական աշխատող Սոնա Գևորգի Ղուլիջօղլյանին:

Ավագանու անդամներ

| **Կողմ (18)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |

Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Վարագյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվականի դեկտեմբերի 22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 237-Ա

Արթիկ համայնք 22 դեկտեմբերի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

